32. ԲԱՑ, ՍԵՎ ՔԱՐՍ

Կէղնի, չէղնի, մեկ հորթարած՝ մը կէղնի. էդի դաշտ ղուր հորթեր կարծցու, կիշե օր թե ձեն մը կիգա, կդառնա ետևանց օր, հանտե, օձ մը վրը պալին զուրին կխանչե, կըսե.

— Տղա՛, արի հուտա, քզի բան կըսիմ։

— Չէ, չըմ հ'իգա,— կըսե տղեն,— դու օձ իս, կխաբիս, ղիս խեթիս։

— Տղա՛,— կըսե օձ,— ես քզի չըմ խեթի, ես Քաջանց թագավորի տղեն իմ, իմ պապու մոտեն ըռըգեր իմ, արի, զիս տար իմ պապու մոտ, ինչ օր քու լեզուն զրվրռնե, կիտա քզի։

Տղեն է, գելնա, զհորթեր կքշե տանե, կէնե մըչ քաղքին, կէրթա մամու կուշտ, կըսե.

— Մարե, քենիմ կտոր հաց գտի, ես կէրթամ։

— Տղա՛ լաո,— կըսե մամ,— դու հ'որի՞ զիտա բան կէնիս, քու հորթերու թարկ կիտաս։

— Չէ, չարա չկա,— կըսե,— ես կէրթամ։

Մամն էր, խեղճ ու կրակ էլավ, քենիմ կտոր հաց ժողվեց, տվեց հ'ինք, տղեն առավ զհաց, դրեց մըչ ուր հապնին (պարկ), կապեց պառեկ ու էլավ, գնաց Քաջանց թաղավորի տղի մոտ։

Քաջանց թագավորի տղեն ըսեց.— Տղա՛, կը տեսնի՞ս զիտա սարն օր կերևա, էդի իմ պապու քոշք ու սարեն է, հըմա բռնե զէդ ճամբեն ու էրթանք։

Գացի՞ն էլան դեմ քոշք ու սարի վրեն, օձն ըսեց տղին.

— Տղա՛, դիս թորկ հուտա, գնա՛, ըսե իմ պապուն թը՝ «Իմ ակնջկլեն ի՞նչ կիտաս, զքու տղեն բերեր իմ»։

Տղեն ակնջկլեն տարավ, Քաջանց թագավոր խնտացավ, ըսեց.

— Ինչ օր քու լեզուն ղրվռե, կիտամ։

Դարձավ, էկավ, առավ զօձն ու գնաց, ճամբխու հետ օձ սորվրցուց տղին, ըսեց.

— Իմ պապու մոտի քարն ուզե։

Գացին մըտ Քաջանց թագավոր. օձեր չորս թարաֆեն լցվան, էկան աչք լուս։ Թագավորն ըսեց.— Տղա՛, դը ուզե օր տամ։

— Թագավոր ապրած, քու մոտու քար կուզիմ,— ըսեց տրղեն։

— Տղա՛, լաո, իմ մոտու քար դու չըս կրռնա բանցու, դու ի՞նչ կէնիս դդարտակ քար, ուզե դունյաքիլի մալ տամ քզի։

— Չէ՛,— ըսեց,— կիտաս, քու մոտու քարն է, չիտաս, քու մոտու քարն է։

Թագավորի չարեն կտրավ, էլավ զմոտու քար տվեց, տղեն առավ զքար, խնտանելին էլավ դուս։ Քաջանց թագավորի տղեն վաղավ ետևանց.

— Տղա՛, կանի,— ըսեց,— զէդ քարի մարիֆաթ ցուցում։

Բերեց զտղեն նստրցուց, դաստրմալ հանեց, փռեց, քար գրեց ի վրեն, ըսեց.

— Աչ, գարա տաշրմ՝ աչ (բաց, իմ սև քարս, բաց)։ Հրտ դահուն չուխտ մը արապ թռան, կանան հ՝առեչ.

— Ավիրի՞նք, թե՞ շիքենք։

— Նա՛ ավիրեք, նա՛ շիքեք,— ըսեց,— ձրնե կուզիմ ձի մը, ձեռք մը հալավ, ձեռք մը սիլահ օր իտա տղեն հագնի, խփի, էրթա։

Էն սրհաթ հ՝ըմեն բան հազրվավ, տղեն հագավ զշորեր, էլավ հեծավ զուր ձին։ ու դեմ գնաց, ուր քոխի դուռ իջավ։

Մամն օր տեսավ զուր տղեն, ջիվարավ, հարցուց.

— Տղա՛, լաո, էդ հ՝ո՞ւստեն գտար զէդ շորերն ու զձին։

— Ըսկի մը՛ հարցու, մարե,— ըսեց տղեն,— աստծու աջողումն էր. դու հրմա էլի, գնա՛ զթագավորի աղջիկն ուզե ընձի։

— Տղա՝ լաո, ես իտա փրռընտուկ, իմա՞լ թագավորի աղջիկ ուզիմ։

— Մարե՛, գու գնա՛, աստված օղորմած է, ես քու տղեն իմ, ըսկի մը վախեցի։

Պառավն էր էլավ, գնաց թագավորի տուն ուզնկան, խնամաթոռ դրին. պառավ նստավ վրեն.

— Թագավոր ապրած,— ըսեց,— էկեր իմ, զքու աղջիկ տաս իմ տղին։

Թագավոր ծիծղաց, ըսեց.

— Պառավ, գնա, հինգ քիսա օսկի բեր, զքու հարս ա՛ռ, գնա՛։

Պառավ դարձավ էկավ, տղեն հարցուց.

— Հա՛ մարե, ի՞մալ էղավ։

— Լաո՛, իտա մեր աղքատ հալին հինգ քիսա փարա կուզե։

— Բան չկա, մարե, քնի էլի, աստված օղորմած է։

Մամ քնավ, տղեն հանեց զքար.— «Աչ, գարա դաշրմ»։

Էրկու արապ թռան հ՝առեջ.

— Աշխարհ ավրի՞նք, թե՞ շիքինք։

— Նա՛ ավիրեք, նա՛ շինեք, ձգնե գուզիմ հինգ քիսա փարեն։

Տեսավ ուր դլխու վերև դրուկ է։

— Դր՛ մարե,— ըսեց,— առ, գնա թագավորի մոտ, տո՛ւր, զաղջիկն ուզե։

Պառավ վերուց զփարեն, տարավ տվեց թագավորին։

Թագավորն օր իշեց, տեսավ զփարեն. մըշ ուր մտաց ըսեց. «Իմ խելք կտրե՞ր է օր պառավ զիմ աղջիկ տանի»։

Ըստախուն թագավոր մհանա էրեց, ուրիշ բան ուզեց։

— Գնա՛,— ըսեց պառվուն,— իմ աղջկան հրմալ ձեռք մը հալավ պտի բերիս, օր հավկթի խեճոռքի մեջ տեղավորի։

Պառավ դարձավ մըտ տղեն.

— Լաո,— ըսեց,— ըստապուն ձեռք մը հմալ հալավ կուզե, օր հավկթի խեճոռքի մեջ տեղավորի։

— Բան չկա, մարե, քնի,— ըսեց,— աստված օղորմած է։

Մամ քնավ, տղեն զքար հանեց, էրկու արապ թռան հ՝առեջ. «Աշխար ավիրի՞նք, թե՞ շիքինք».

— Նա՛ ավիրեք, նա՛ շիքեք. ձզնե կուզիմ հրմալ ձեռք մը հալավ, օր հավկթի խեճոռքի մեջ տեղավորի։

Լուսմթի էլավ, օր ձեռք մը հալավ հազր՝ դլխու վերև դրուկ է։ Տվեց մամուն՝, մամ առավ, դեմ գնաց թագավորի տուն, տվեց զհալավ.

— Դե,— ըսեց,— թագավոր ապրած, տո՛ւր զհարս առնիմ էրթամ։

— Թավո՛ւ, պառավ, դու հրմալ խոլայի հալով իմ ձեռնեն չըս պրծնի։ Քղնե կուզիմ օր քոշք ու սարե մը շինիս, չորս դիուց բաղ ու բաղչա, հրմալ օր իգա, հասնի չուրի իմ դուռ, գետնի վրեն լէ

խալի խալիչա պտի փռիս, օր ներքևեն իմ ախչկա ձիու ոտք նա դետին առնե, նա լէ վերևուց արև զարկի վրեն։

Պառավ էլավ, գնաց մըտ տղեն։ Տղեն հարցուց.

— Մարե, ուզի՞ր։

— Չէ՛, լաո՛, թագավոր ըստապուն քոշք ու սարա կուզե, մեր դռնեն չուրի ուր քոշք ու սարի դուռ՝ բաղ ու բաղչա, խալի ու խալիչա պտի էղնի։ Լաո՛, ընծի ականջ կէնիս, արի՛ թագավորի ախչկա թարկ տուր, էրթանք մեր հնգուֆին ախչիկ մը ուզինք։

— Բան չկա, մարե, քնի, աստված օղորմած է։

Մամ քնավ, տղեն զքար հանեց, էրկու արապ թռան, կանան հ՝առեջ. «Աշխարհ ավիրի՞նք, թե՞ շիքինք»։

— Նա՛ ավիրեք, նա՛ շիքեք. ձգնե կուզիմ իտա քոխի տեղ մեկ քոշք ու սարե մի դնիք, հ՝ոցկա լէ հարի թագավորի սարի դուռ բաղ ու բաղչա, խալի ու խալիչա պտի փռիք, օր թագավորի ախչկա ձիու օտք գետին չառնե։

Լուսմթի թագավոր էլավ, իշեց օր ի՞նչ իշե. շավխ տվե վըր ուր քաղքին, չորս թարաֆեն բաղ ու բաղչա, ծառ ու ճուղ, գետնի էրես խալի ու խալիչա, էկե հասե չուրի ուր քոշք ու սարի դուռ։

— Հե՛յ վա՛խ,— ըսեց,— պառավ զիմ ախչիկ պտի տանի։

Պառավն էր, լուսմթի էլավ, գնաց թագավորի տուն։

— Դը, դո՞ր է,— ըսեց,— տվիք զիմ հարս տանիմ, էլ ի՞նչ անուն կը դնիք։

Թագավորն ըսեց.— Պառավ, օր հըմալ է, կէրթաս յոթ ձեռք դհոլ ու զուռնա կը գտնիս, գիգաս ձիով ու ձիավորով, հելով հանգամով չավերի (քամանչա) քաշելով զքու հարս կտանիս։

Պառավն էր, էլավ գնաց, ղրմեն թատարուք տեսավ, առավ զուր հարսն, էկավ։

Թագավորի ախչիկն էր, մեկ վախթ մը մնաց, ուր պապու տան արապի հետ նստավ, կանավ։ Տղեն հ՝ըմն օր կէրթեր նեջիր, իրկնեիրկուն գիկեր տուն։

Թագավորի ախչիկ՝ չէ կնիկ խըսմի սատանա կէղնի, խաբլուտենով ղիրկա մոտեն խոսք քաշեց, զքարի ահվալն իմցավ։ Էլան ինք ու արապ խոսքեր ուրանց էրին մեկ, ախչիկ զքար գողցավ տղի մոտեն, բացեց. «Աչ, գարա տաշըմ». Էրկու արապ թռան հ՝առեջ կանան. «Հա՛ն, ավերի՞նք, թե՞ շիքինք»։

— Նա՛ ավիրեք, նա՛ շիքեք, ձգնե կուզիմ օր իդա քոշք ու սարեն վերուք, տանիք դնիք յոթ ծովու կղզին։

Լուսմթի տղեն էլավ, օր ի՞նչ էլնի, նա՛ քոշք ու սարա, նա՛ բան. էլմը հ՚ավալգու տուն, էլմը հ՚ավալգու չոր գետին։

— Հե՛յ վա՛խ, ու հե՛յ վա՛խ,— ըսեց,— ըպա իմ տուն ակոլավ, թագավորի աղջիկ զիմ քար գողցեր է։

Տղեն էր, էլավ, ընկավ ի ճամբախ, Քաջանց թագավոր, դո՞ր իս, էկա քզի։ Գնաց Քաջանց թագավորի մոտ, բարև բռնեց, կանավ։

— Հա՛, լաո՛, հ՚որի՞ էկար,— հարցուց թագավոր։

— Թագավոր ապրած, զքու տված քար իմ կնիկ գողցե, առե զարապ, փախեր է։

— Թաո՛ւ, լաո, ես չըսի՞ դու իմ քար չըս կռնա մարսի։ Կանի էլնամ խանչիմ զիմ օձեր, տեսնամ, ո՞ր սալըղ մը կիտա։

Էլավ կանավ բինակ-դաշուն, ճչաց, աշխար էղավ օձ ու էկավ. վիրնից հարցուց, մարդ սալըղ չը տվեց։

Ըսեց.— Լաո՛, իմ օձեր խապար չունին, գնա Խոլ օձերու թադավորի մոտ։

Տղեն գնաց Խոլ օձերու թագավորի մոտ էլավ դուռ։

Խոլ օձերու թագավոր լէ զուր օձեր բերեց, մե՛կ սալըղ չը տվեց.

Ըսեց.— Տղա՛, իմ օձեր խապար չունին, գնա Մկան թագավորի մոտ։

Տղեն գնաց, էլավ Մկան թագավորի մոտ։

— Հան, խեր էղնի, հողածին, դու ի՞նչ կօլորտիս իգա վերքեր։

— Վոլլա, թագավոր ապրած, հալ ու հեքյաթ իտրմլա բան մը կա, իմ քարն է կորե, ընկեր իմ, կը գաշիմ։

— Տղա՛, լաո,— ըսեց թագավոր,— ես դուս չըմ էլնի, ես չըմ կռնա խապար էղնի, սար ու ձոր իմ մկներ կօլորտին, կանի, խանչիմ, հարցում։

Խանչեց զուր մկներ, զմեն բերեց, մեկ սալըղ չը տվեց։ Թոփալ մուկ մը ետի դեն մացեր էր, հարցուցին թոփալ մկնեն, մուկ սալըղ տվեց, ըսեց.

— Ես Յոթ ծովու կղզին իմ տեսե զընտոց։

Թագավոր ամբ էրեց թոփալ մկան.

— Ընկի,— ըսեց,— էդ մարդու հ՚առեջ, տա՛ր զկղզին ցուցու։

Ընկավ հ՚առեջ, տղի հետ լէ բոճի մը կեր, էղան մեկ ու գացին։

Շատ ու քիչ գացին, աստված դինա, էլան ի ծովու պռուկ դուռ։ Տղեն մնաց ի ծովու պռուկ, բոճին ու մուկ լողալին գացին քոշք ու սարի դուռ, կանան։ Բոճին մնաց դուռ կանուկ. մուկ ծակեց, զպատի տկով, գնաց արապի ու թագավորի աղջկա օրթեն՝ ծկի

մոտ բաղլեց։ Արապն ու թագավորի ախչիկ նստած են, կը խազեն, քար էն կը թալեր ընտրա գիրկ. էն՝ ընտրան։ Մուկ փշում կըռթ-կըռթցուց, թագավորի ախչիկ իշեց էն դեն։ Արապն օր զքար թա-լեց առավ թագավորի ախչկա ճկութ, պատավ մկան ծկու վերեն, մուկ սըլվըլաց, առավ խածեց զքարն ու գե գիտի ջվտկե. հասավ բոճու մոտ ու էրկուս թալին զուրանց ծով։

Բոճին ըսեց.— Մո՜ւկ, դու չը կառնաս լողաս, տուր զքարն։

— Չէ, չըմ իաա,— ըսեց մուկ,— դու հարզաքար մարդ մ'իս, հըմա շուք մը տեսար, պտի հաշաս, քար բերնեղ պատի։

Փշում ի տեղ գացին, մուկ պտի խեղդեր, բոճին շուշուտ քար բերնեն առավ, մուկ թալեց շալաքն ու լողաց։ Դրա ոտ մը տեղ չըն գացած են, մուկ քիսավ բոճու ոտք, հրտ գահուն բոճին հաշաց, քար բերնեն պատավ, ձուկ կլուց զքար։ Մուկն ու բոճին էլան ջրից, ու նստան ծովու ափ, բաղլեցին։ Ավուր մեկ թոռչիք էկան, թոռ թալեցին, աստու հրամանքով էն ձուկ ընկավ թոռ, վերուցին, թալեցին ջուր, բոճին առավ զձուկն ու փախավ, բերեց դեմ տղի մոտ։

Տղեն խնտացավ, առավ զքար, բացեց. «Աչ, գարա-դաշըմ»։ Էրկու արապ թռան հ'առեջ կանան.

— Աշխար ավրի՞նք, թե՞ շիքինք։

— Նա՜ ավիրեք, նա՜ շիքեք, զէն քոշք ու սարեն հ՜ուստեն բերեր իք, էլմը էնտեղ տարեք, զիսի լէ հետ։

Լուսամթի տղեն էլավ օր քոշք ու սարեն թագավորի քաղքի մեջ դրուկ է, վազավ, գնաց թագավորի մոտ, ըսեց.

— Թագավոր ապրած, զիսի նա՜ կհարցուս, նա՜ կփտռիս, թե դո՞ր գացիր, դո՞ր էկար։

— Լաո, ես գինա՞մ, դու կատղուկ իս, ջնուն իս, դո՞ր տա-բար զիմ ախչիկ, դո՞ր բերիր։

— Ձախչիկդի հ՜իսնե հ'որի՞ կհարցուս, քու արապից հար-ցու, օր հանտա դրա էրկուս իմ քոշք ու սարի մեջ պարկուկ ին։

Թագավոր ամը էրեց, ջալլաթջին գնաց, զէրկսի գլոխ լէ կտրեց։

Նոր թաժա բերեցին, զուր պզտի ախչիկ պսակեց վրը տղին, յոթն օր, յոթն գիշեր զհարսնիսն էրեց, կերան, խմին, լիացան։ Էն հասավ, ուր մուրազին, դուք լէ հասնիք ձեր մուրազին։

Նխշուն չոքեք մըջ էղին,

Դիլրար տարան մըջ գեղին։